Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ « Իջևանի թիվ 3 հիմնական դպրոց » ՊՈԱԿ

Առարկա՝

Թեմա՝ **«Նախագծային ուսուցման արդյունավետությունը»**

Վերապատրաստող, մենթոր՝ Ն. Ղազումյան

Ուսուցիչ՝ Վ. Ստեփանյան

Իջևան 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գլուխ առաջին

Նախագծային գործունեության էությունը ընդհանուր բնութագիր

1.1 Նախագծային գործնեության կազմակերպման նպատակներն ու փուլերը…6

1.2 Նախագծային մեթոդը որպես տարրական ուսուցման ուսուցման գործընթացի լավագույն արդյունքի ստացման միջոց…9

Գլուխ երկրորդ

Նախագծային գործնեության կազմակերպման գործընթացի առանձնահատկությունները և իրականացման պրակտիկան:

2.1 Սովորողների ստեղծագործական մտախոհության զարգացումը նախագծային գործնեության միջոցով…12

2.2 << Ես և շրջակա աշխարհը>> դասագրքի << Իմ հայրենիքը>> թեմատիկ խմբի ամփոփումը նախագծային գործնեությամբ …15

2.3 <<Իմ հայրենիք>> նախագծային գործնեության արդյունքների ամփոփման այլընտրաքային ձևի կիրառման մեր փորձ…18

Եզրակացություններ…21

Օգտագործված գրականություն…22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես մանկավարժության տեսության մեջ,այնպես էլ պրակտիակկայում այսօր մշտապես քննարկվում է տարրական դպրոցում աշակերտակենտրոն կրթադաստիարակչական գործնթացի ապահովման հիմնադիրը՝ որպես արդյունավետ կրթադաստիարակչական գործընթացի երաշխիքները: Այս մեթոդների հիմքում աշակերտների ակտիվ մասնակցությունն է գիտելիքների ձեռքբերման գործընթացի, նրանց ստեղծագործական-որոնողական գործունեությունը: Նշված աշխատանքների արդյունավետ կազմակերպան նպատակով բազմաթիվ ուսումնասիրություններ են իրականացվում, մշակվում են տեսական և գործնական սկզբունքներ, մեթոդներ որոնք կարող են սկսած տարրական դպրոցից նպաստել ակտիվ մտածող, ինքնուրույն գործող, ստեղծագործական գործունեություն ծավալող մարդու ձևավորմամբ:

Թեմայի արդիականությունը

Անառարկելի է,որ մարդու հաջողությունները մեծ մասամբ որոշվում են իր կյանքը, մասնակգիտական գործունեության ընթացքը որպես նախագիծ կազմակերպելու ունակությամբ, որոշել հեռավոր և ամենամոտ հեռանկարները, գտնել և յուրացնել անհրաժեշտ ռեսուրսները, փոխել գործունեության պլանը և իրականացնելով այն գնահատել,թե արդյոք հաջողվ՞ել է հասնել դրված նպատակին: Աշխարհի մաշտաբով կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ժամանակից քաղաքականության, սպորտի, բիզնեսի, արվեստի առաջատարների մեծ մասն ունեն նախագծային մտածողություն:

Պատահական չէ,որ այսօր ծրագրեր են մշակվում սովորողների մտածողության այս ձևի զարգացման ուղղությամբ, որն իրականացվում է ուսումնական գործունեության հատուկ տեսակի՝ նախագծային գործունեության կազմակերպան միջոցով:

Դպրոցում ուսումանասիրվո առարկաների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող աշակերտների հետ ուսուցիչները հաճախ տարրեր տիպի աշխատանքներ են իրականացնում: Դրանցից են առարկայական օլիմպիադաները, տարաբնույթ վիկտորինաները, ինտելեկտուալ խաղերը և այլն: Մեկ այլ ձև է աշակերտների հետազոտական և նախագծային գործունեության կազմակերպումը: Ակնհայտ է, որ կրթական բարեփոխումների գլխավոր արդյունքն այսօր պետք է լինի դպրոցն ավարտող երիտասարդի, ինչպես իր, այնպես էլ հասարակության

բարեկեցության համար անձնական պատասխանատվությունը: Այս տեսանկյունից, հատկապես նախագծային գործունեություն, ըստ մեզ, համապատասխանում է կրթության նոր խնդիրներին և կարող է դառնալ կրթության բովանդակության բարեփոխումների տարերից մեկը:

Հետազոտության նպատակը

Հետազոտական աշխատանքի հիմնախնդրի շուրջ աշխատելիս մեր նպատակն է եղել ավանդական և ժամանակակից մեթոդների համադրման ճանապրհով հետազոտել նախագծային մեթոդի կիրառման հնարավորությունները և ձևերը տարրական դպրոցում:

Իբրև հետազոտության խնդիրները մենք առաջադրել ենք՝

- Ուսումնասիրել մեր հետազոտական թեմայի շուրջ առկա մասնագիտական գրականությունը, տարրական դասարանների չափորոշիչները և մայրեիի առարկայական ծրագիրը բացահայտել տարրական դպրոցում նախագծային գործունեության ծավալման հնարավորությունները,
- Պարզել նախագծային գործնեության դերը կրտսեր դպրոցականների ստեղծագործական,համագործակցային, ճանաչողական կարողությունների և արժեհամակարգի ձևավորման գործընթացում.
- Մշակել տարրական դասարաններում նախագծային գործունեության կամակերպչական,մեթոդական ցուցումներ հիմք ընդունելով մայրենիի դասագրքերի թեմատիկ խմբերի ամփոփման փորձը:

  Մեր ուսումնասիրություններն իրականացրել ենք Տավուշի մարզի Իջևան քաղաքի 3-րդ հիմնական դպրոցի 4-րդ դասարանում

ԳԼՈՒԽ 1

Նախագծային գործունեության էությունը ընդհանուր բնութագիր

Նախագծերի մեթոդը (Project methods) ուսուցման համակարգ է,որի ընթացքում սովորողները գիտելիքներ,կարողություններ,հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում:

Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նորույթ չէ:Այն առաջին անգամ նկարագրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում կրթական բարեպոխումների շրջանում,ինչի արդյունքում կրթությունը դարձավ աշակերտակենտրոն:Հետագայում այն լայն տարածում ստացավ եվրոպական երկներում:Մեթոդի ի հայտ գալը կապվում է Ջոն Դյուիի անվան հետ,երբեմն անվանում են նաև համախնդիրների մեթոդ:

Նախագծերի մեթոդը իր արդիականության նշանակությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, այն 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է,որը թույլ է տալիս անհատականացնելու ուսուցման գործունեությունը,սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում,տեխնոլոգիա է,որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ:

Նախագծային մեթոդի առանձնահատկություններն են՝

ա) ուսուցողական

բ) որոնողական

գ) ճանաչողական

դ) ստեղծագործական

ե) նորամուծական

զ) գործնական

է) զարգացման ուղղվատություն

ը) անձնակենտրոն

Նախագծային գործունեության կազմակերպման նպատակներն ու իրականացման փուլերը

Ուսումնական նախագիծը ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է սովորող գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի ձևակերպման:

Այն հնարավորություն է տալիս սովորողի բացահայտելու իր մեջ եղած ստեղծագործական ներուժը: Խմբային աշխատանքների՝ նախագծերի իրականացման պարագայում այն առաջարկում է մի շարք խնդիրների լուծումներ, ինչպես նաև զարգացնում է սովորողների մոտ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային աշխատանք կազմակերպելու հմտություն: Ուսուցման նախագծային համակարգի հիմնական արժեքն այն է, որ այն աշակերտներին ուղղորդում է ոչ թե որոշակի թեմայի պարզ ուսումնասիրության այլ կրթական արդյունք ստեղծելու գործընթացին:

Ուսումնական նախագիծն ունի իր իրականացման փուլերը

1. Հիմնահարցի ձևակերպում
2. Աշխատանքային խմբի (խմբերի)ձևավորում
3. Աշխատանքի բաժանում
4. խմբերի, անհատների ինքնուրույն աշխատանք
5. Հետազոտություն
6. Ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ
7. Կատարված աշխատանքների ներկայացում
   - ✓ նախօրոք որոշվում է ներկայացման ձևը՝տեսանյութ, ֆոտոշարք, հոդված
8. Սովորողների և խմբի աշխատանքների գնահատում
   - ✓ գնահատումը կատարվում է և՛դասավանդողի, և՛սովորողների կողմից
   - ✓ գնահատվում է յուրաքանչյուր սովորող
   - ✓ գնահատվում է ամբողջ խումբը
9. Հետագա աշխատանքի ուղիների նախանշում

Նախագծային մեթոդի ուսուցման հիմք կարելի է ընդունել սովորողի ակտիվ գործունեությունը՝հաշվի առնելով սովորողի անձնական հետաքրքրությունները՝կոնկրետ թեմայի շուրջ:

Այս մոտեցումը առավել նպատակային է տարրական դասարաններում աշակերտների մոտ՝ փնտրելու, պրպտելու, ջիղը զարգացնելու նպատակն ունենալով: Էական նշանակություն ունի նաև այն, որ սովորողներին առաջարկվեն իրական կյանքից վերցված խնդիրներ, որոնք կարևոր են իրենց համար:Կրտսեր դպրոցականները սկսում են մտածել և տարորոշել,առանձնացնել հետաքրքրությունների հստակ շրջանակ:

Այս խնդիրների լուծման համար սովորողին անհրաժեշտ կլինի կիրառել ինչպես մինչ այդ ունեցած գիտելիքները, այնպես էլ նոր գիտելիքներ, որոնք նա ձեռք կբերի աշխատանքի ընթացքում:

Սովորողի դերը նախագծային աշխատանքում էապես տարբերվում է:Պասիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից,հետազոտող,գործունեություն ծավալող:Նա ազատ է գործունեության ձևի ու տեսակի մեջ:Տարրական դասարանում սովորողի համար այս մեթոդը թերևս նաև անհատական առանձնահատկություններ բացահայտելու լավագույն խթան է, սկիզբ: Նախագծի առանձնահատկություններից մեկն էլ աշխատանքի նախնական պլանավորումն է: Ամբողջ ընթացքը՝սկսած ծագած խնդիրներից մինչև նախագծի նպատակը,անհրաժեշտ է բաժանել առանձին փուլերի յուրաքանչյուրի համար իրենց ժամանակավոր խնդիրներով,պարզել այդ խնդիրների լուծման միջոցները և դրա համար ռեսուրսներ գտնել աշխատանքի համար մանրամասն աղյուսակ կազմել,որտեղ նշված լինի յուրաքանչյուր փուլի իրականացման ժամանակը:

Նախագծային աշխատանքի պլանի իրականացումը,որպես կանոն,կապված է գրականության և տեղեկատվության ընտրության հետ:Հնարավոր է նաև կապված է տարբեր փորձերի անցկացման,գիտափորձերի,դիտումների,հետազոտությունների, հարցումների,ստացված տվյալների, եզրակացությունների ձևավորման և դրա հիման վրա ձևավորած սեփական տեսակետի հետ: Նախագծի խնդրի լուծման և գտնված լուծման մարմնավորման համար ստեղծվում է նախագծային արտադրանք: Նախագծային արտադրանքը պետք է ունենա պարզորոշ սպառողական հատկություններ,որոնք էլ բավարարեն խնդրի հանդիպած ցանկացած մարդու պահանջները,որի լուծմանը հենց ուղղված էր տվյալ նախագիծը:

Նախագծային մեթոդը որպես տարրական ուսուցման գործընթացի լավագույն արդյունքի ստացման միջոց:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա գրված մաս՝ հաշվետվություն աշխատանքի ընթացքի մասին, որտեղ նկարագրված են աշխատանքի փուլերը (սկսած նախագծի խնդրի առաջադրումից)նրանց վրա հիմնված բոլոր որոշումները, առաջացած բոլոր խնդիրները,դրանց հաղթահարման միջոցները,վերլուծվում է հավաքված տեղեկատվությունը,գիտփորձերի անցկացումը և դիտումը ի մի են բերվում հարցումների արդյունքները, տրվում են եզրակացություններ, պարզաբանվում են նախագծի հեռանկարները:

Այսպիսով ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից կազմակերպված և աշակերտների կողմից իրականացնող գործողությունների ամբողջությունն է: Դասավանդողի դերը նախագծի իրականացման տարբեր փուկերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա հանդես է գալիս որպես խորհրդատու օգնական: Նա գիտելիքներ չի փոխանցում, այլ ապահովում է սովորողի ինքնագործունեությունը, այսինքն խորհուրդներ է տալիս, հետևում է ընթացքին;ուղղորդում է: Ուսուցչի համար ուսումնական նախագիծը զարգացման ինտեգրված դիդակտիկ միջոց է, ուսուցում և դաստիարակում,որը թույլ է տալիս զարգացնել նախագծային հատուկ կարողություններ ու հմտություններ՝ խնդրի առաջադրում, նպատակամղվածություն, իրականացվելիք պլաններ, վերլուծություն, ինքնքներկայացում, ինչպես նաև տեղեկատվության որոնում, ակադեմիական գիտելիքների օգտագործում ըստ նշանակության, ինքնակրթություն,հետազոտական և ստեղծագործական գործունեություն:

Ուսուցչի դերը նախագծային մեթոդը կիրառելիս անգնահատելի է հատկապես տարրական դասարանում: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ կարծում ենք տարրական դասարանի աշակերտենրը դեռևս չեն տիրապետում անհրաժեշտ այն կարողություններին, որոնց միջոցով իրականացվում է լիարժեք ուսումնական նախագիծ: Տարրական դասարանների առնչությամբ անհրաժեշտ է շեշտ դնել նախագծային գոործունեության տարրերի վրա: Նախագիծը պետք է ունենա պարզ, իրականցվելիք, հասանելիք նպատակ:Տարրական դասարաններում կազմակերպվող նախագծային գործունեության առանձնահատկությունն այն է, որ դրանք անհատական, զույգերով, խմբային, կոլեկտիվ խմբային առաջադրանքներ են, որոնք դպրոցին

հնարավորություն են տալիս դասի ընթացքում կատարվող ուսումնական գործունեությունից անհատապես անցում կատարել զարգացման արդիական փուլից դեպի զարգացման մերձավոր գոտի, խմբերից յուրաքանչյուրը կարող է աշխատել նախագծային աշխատանքի որևէ մասի, որևէ հարցի կամ խնդրի շուրջ:

Պրակտիկայում առավել հաճախ օգտագործվում են անհատական և խմբային գործունեության նախագծի հետևյալ տեսակները.

1. Հետազոտական-ստեղծագործական
2. Դերային-խաղային
3. Տեղակտվական-կողմնորոշիչ
4. Գործնական-ստեղծագործական-կողմնորոշիչ

Նախագծային ուսուցման մերոդի կիրառման դեպքում ուսուցչի կողմից գնհատումը,ինչպես նաև աշակերտների ինքնագնահատումը կատրվում են՝ ներկաբացնելով և հիմնավորելով գործունեության ընթացքում դրսևորված դրական հտկանիշները՝ հիմնակսն շեշտը դնելով ձեռքբերումների վրա: Այս դեպքում հաշվին են առնվում աշակերտի անհատական ունակությունները, աշակերտին հնարավորություն է տալիս սովորել առանց ուսման մեջ մատնվելու,հաշվի առնելով յուրաքնչյուր աշակերտի իրական կարողությունները, որքանով է նա օգտագործել իր ունակություններին առաջադրանք կատարելու համար: Սխալները քննարկվում և ուղղվում են համատեղ: Սխալներ թույլ տալը համարվում է ուսման գործընթացում ընդունելի: Այսպիսի մոտեցումը աշակերտներին տալիս է որոշակի ապահովության զգացում և թեթևացնում է լարվածությունը:

Այսպիսով, առաջնորդվելով վերոհիշյալ սկզբունքներով, գնահատման գործընթացում մենք՝

- Ոչ թե պարզապես գնահատում էինք աշակերտների աշխատանքը, այլ ամրագրում զարգացման շարժընթացը.
- Գնահատեւմ էինք աշակերտի առաջադիմությունը՝ իր նախորդ ձեռքբերումների համեմատ
- Մատնանշում էինք, թե որքանով է աշակերտն օգտագործել իր ընդունակությունները:

Նախագծային աշխատանքների ժամանակ սովորողների գործունեությունը էապես տարբերվում է ավանդական ձևից՝ պասիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող, ով ազատ է գործունեության

ձևի ու տեսակի ընտրության մեջ: Կարևորում ենք նշել, որ սովորողի համար այս մեթոդը նաև սեփական անհատական առանձնահատկությունների բացահայտման լավագույն խթան՝ մեկնարկ:

Նախագծային աշխատանքի պլանի իրականացման ձևերի ընտրությունը, որպես կանոն, պայմանավորված է գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների ուսումնասիրությամբ, տեղեկատվության ընտրությամբ:

Աշխատանքը պլանավորելիս մենք կարևորել ենք, որ նախագծի տեսական բաղադրիչը՝ հաշվետվություն աշխատանքի ընթացքի մասին, որտեղ պիտի նկարագրվեն աշխատանքի բոլոր փուլերը (սկսած նախագծի խնդրի առաջադրումից), նրանցից բխող բոլոր որոշումները,ծագած բոլոր խնդիրները, դրանց հաղթահարման միջոցները:Սա նշանակում է,որ նախապես պիտի վերլուծվի հավաքված տեղեկույթը,գիտափորձերի ընթացքը,ի մի պիտի բերվեն հարցումների արդյունքները,ձևակերպվեն եզրակացությունները,պարզաբանվեն նախագծի հեռանկարները:

Այսպիսով, ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից նախագծված կազմակերպված, աշակերտների կողմից ուսուցչի ղեկավարությամբ և մշտադիտարկմամբ իրականացվող գործուղությունների ամբողջություն է:

ԳԼՈՒԽ 2

Նախագծային գործունեության կազմակերպման գործընթացի առանձնահատկությունները և իրականացման պրակտիկան

Սովորողների ստեղծագործական մտախողության զարգացումը նախագծային գործունեության միջոցով Ջ. Գյուլամիրյանը նշում է, որ նախագծային աշխատանքը մեծապես նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը, որը սովորողակենտրոն ուսումնական գործընթաց է և ուսուցչակենտրոնից շահեկանորեն տարբերվում է նրանով,որ նախկինում առաջատար սուբեյկտը՝ ուսուցիչը դառնում է սովորողներին զուգընկեր,մտնում է աշակերտների հետ հաղորդակցության մեջ,և ստեղծվում է աշակերտ-ուսուցիչ խոսքային համագործակցության ձև:

Նախագծային մեթոդով աշխատելիս սովորողներն ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ պիտի ձեռք բերեն նոր տեղեկություններ,յուրացնեն այն,վերլուծեն և ներկայացնեն կապակցված խոսքի տարբեր ոճերով:Նախագծի կատարման ընթացքում սովորողները հայտնվում են իրենց համար բոլորովին նոր իրավիճակում, որից ելքեր որոնելու աշխատանքն էլ ակտիվացնում է նրանց իմացական գործունեությունը,ձեռք են բերում մտավոր գործունեության սեփական փորձ, որն էլ ընկած է խոսքի գործընթացի հիմքում:Նախագծային կրթությունը աշխարհի հետ նախագծային մեթոդով փոխազդեցության ձևավորման եղանակ է:Նախագծային մտածողությունը վերացնում է հակասությունները՝ ժամանակակից հասարակության զարգացման տեխնոլոգիական փուլի և կրթության միջև:

Նախագծային կրթության հայեցակարգի հեղինակ Գ. Է. Իլյինը ուսումնական գործընթացում առանձնացնում է սովորողների նախագծային ձևավորման մշակույթը և նախագծային ստեղծագործականությունը: Նա նշում է, որ նախագծային մշակույթ ստեղծելու ունակությունը նյութական և հոգևոր ոլորտներում ինչ-որ նոր բան ստեղծելուձգտումն է, իսկ նախագծային ստեղծագործական մտածողությունը գիտական մտածողության հիմքն է, որը ծնունդ է տալիս նոր մտքերի ու գաղափարների՝ ներառելո նաև քննադատական մտածողությունը:

Նախագծային գործունեությունը աշակերտների ստեղծագործական կարողության զարգացման ձևերից մեկն է:

Որքան էլ որ նախագծային գործունեության ակտիվ մասնակիցը սովորողն է, միևնույնն է ուսուցիչը մնում է մանկավարժական գործընթացի կազմակերպիչը և կողմնորոշողը:

Նախագծային գործունեությունը սովորողների զարգացման ինտեգրված դիդակտիկ միջոց է, ուսուցում և դաստիարակում, որը թույլ է տալիս զարգացնել նախագծային հատուկ կարողություններ ու հմտություններ՝ խնդրի առաջադրում, նպատակաղմվածություն, իրականացվելիք պլաններ, վերլուծություն, ինքնաներկայացում, ինչպես նաև տեղեկույթի որոնում, ձեռք բերած գիտելիքների կիրառում ըստ նշանակության, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն:

Ուսուցչի մասնակցությունը պիտի նպաստի, որ նախագծային գործունեությունն ունենա պարզ, իրականացվելիք սովորողներին հասանելի նպատակ, հետաքրքրությունների շրջանակ: Նախագծային գործունեության ընթացքում ի՞նչ դժվարությունների է հանդիպում ուսուցիչը որպես նախագծային գործունեության կազմակերպիչ:

- Նախագծային գործունեությունը սովորաբար կազմակերպվում է դասաժամից դուրս՝արտաժամյա գործունեության սահմաններում և ուսուցչի դժվարությամբ է կոորդինացնում աշակերտների գործունեությունը:
- Նախագծային գործունեությունը թե աշակերտի, թե ուսուցչի համար լրացուցիչ գործունեությունն է, որի կազմակերպման ողղությամբ դեռևս բավարար չափով ուսուցիչները իրազեկված չեն:
- Ուսուցիչները հաճախ դժվարությամբ են կողմնորոշվում նախագծային գործունեություն ապահովող թեմաների ընտրության և ձևակերպման գործընթացում, իբրև թեմա երբեմն ընտրում են ոչ լիարժեք,կրտսեր դպրոցականների հետաքրքրություններին և մոտավոր կարողություններին համարժեք խնդիրներ:
- Մենք մասնավորապես դժվարանում ենք նախագծային գործունեության ավարտին աշակերտների ձեռքբերումների գնահատելու հարցում:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Իմ հայրենիքը

Ասա ինձ և ես կմոռանամ, ցույց տուր ինձ և ես կհիշեմ, ներգրավիր ինձ և ես կսովորեմ:

Չինական առած

Նախագծային ուսուցումը դասավանդողի և սովորողների համատեղ կրթական գործունեությունն է, որը նպատակաուղղված է որևէ հիմնախնդրի, հիմնախնդիրների տեսական և կամ գործնական լուծմանը: Մայրենի և Ես և շրջակա աշխարհը առարկաներից ուսումնառելով Հայրենիք թեման՝ 4-րդ դասարանի աշակերտների հետ նախագծեցինք Իմ հայրենիքը գործնական աշխատանքը:

Աշակերտները բաժանցվեցին խմբերի, ընտրեցին խմբի ավագ, որոշեցին յուրաքանչյուր խմբի աշխատանքը թեման և անցան գործի: Աշխատանքը տվեց գրեթե երեք շաբաթ՝ նյութերը հավքեցին, վերլուծեցն, համադրեցին, դարձրեցին մեկ ամբողջություն և ներկայացնել:

Նախագծային ուսուցման հիմնական նպատակներն են՝

1. Նպաստել յուրաքանչյուր մասնակցի ինքնագնահատականի բարձրացմանը՝
    - Հնարավորություն ստեղծել, որ յուրաքանչյուրն իրեն տեսնի որպես ընդունակ և իրազեկ անհատակունություն;
    - Մասնակցի մոտ զարգացնել իր և մյուսների դրական կերպարը;
    - Սովորողի մոտ ձևավորել իրեն և մյուսներին ստույգորեն գնհատելու հմտություն;
2. Ոգեշնչել սովորողներին զարգացնել կարողությունները.
3. Ապահովել սովորողի քննադատական մտածողության զարգացման մեխանիզմը, դրված խնդիրը լուծելու ուղիների որոնման հմտության ձևավորում:
4. Զարգացնել սովորողների հետազոտական հետազոտական կարողությունները (բացահայտել հիմանախնդիրը, հավաքել անհրաժեշտ տեղեկություններ, դիտարկել գործնթացները, ձևակերպել վարկածներ, ընդրանացնել և այլն) և վերլուծական մտածողությունը:

Իրականացվող նախագծերն ունեն հետևյալ տիպաբանական հատկանիշները՝ ըստ սովորողների գերակշռող գործունեության (առարկայորեն կողմնորոշված, հետազոտական, ստեղծագործական, տեղեկատվական, դերային), ըստ բովանդակության (միջառարկայական և մոնոնախագծեր), ըստ հարաբերությունների բնույթի (ներդասարանային, միջդասարանային, տարածաշրջանային, համապետական, միջազգային), ըստ տևողության (մինինախագծեր՝ մինչև մեկ շաբաթ, կարճաժամկետ՝ մինչև մեկ ամիս, միջնաժամկետ՝ մինչև վեց ամիս, երկարաժամկետ՝ կես տարուց ավելի), ըստ մասնակիցների թվի (անհատական, խմբային, միջխմբային):

Մեր նախագծայինը տեղեկատվական էր, միջառարկայական, ներդասարանային, կարճաժամկետ, միջխմբային:

Նախագծային ուսուցումը կազմակերպելիս հարկ է ապահովել նախագծի իրականացման փուլերի ճիշտ հերթագայությունը և նրանց հատկացվելիք ժամանակի իրատեսական համամասնությունը: Նախագծային աշխատանքի փուլերն են՝

1. Նպատակադրում-երբ որոշեցինք նախագծել Իմ հայրենիք թեման.
2. Գործունեության տարբերակների քննարկում, միջոցների և եղանակների ընտրություն-երբ քննարկեցինք, թե ինչ ենք ուզում ստանալ:
3. Պարտականությունների բաշխում- երբ յուրաքանչյուրն ունեցավ իր անելիքը:
4. Ինքնակրթության և գիտելիքների արդիականացում:
5. Հետազոտական գործունեություն, երբ յուրաքանչյուրն սկսեց աշխատել իր նյութի շուրջ:
6. Արդյունքների ընդհանրացում և եզրակացություններ-երբ իրենց աշխատանքների արդյունքը ներկայացնում էին խմբերում և միասին քննարկում:
7. Արդյունքների հանրայնացում:
8. Հաջողությունների և սխալների վերլուծություն:
9. Շտկողական գործունեություն:
10. Նախագծի հրապարակային պաշտպանություն:

ԴԱ ԿԱՏԱՐՎԵՑ ԱՅՍՊԵՍ՝

Աշակերտները ուսուցչի հարցերի միջոցով ներկայացրեցին իրենց կատարած աշխատանքը, որի ընթացքը ցուցադրվեցին նաև տեսանյութով:

Նախագիծը բաղկացած էր 4 փուլից: Նախ՝ ընտրեցին ընդհանուր թեման՝ Իմ հայրենիք բաժանվեցին խմբերի,յուրաքանչյուր խումբ ընտրեց իր թեման

1. Հայաստանի խորհրդանիշներ
2. Հայաստանի մարզեր
3. Հայաստանի տեսարժան վայրեր
4. Երգեր և բանաստեղծություններ Հայաստանի մասին
5. Հայ անվանի մարդիկ

Թիմերը սկսեցին ուսումնասիրություններ անել և պատրաստել դիդակտիկ նյութեր: 4-րդ փուլի ընթացքում երեխաների պատրաստած նյութերը հավաքվեցին մեկ պաստառի վրա:

Երեք շաբաթ տևողությամբ նախագծիավարտին՝ 5-րդ փուլում աշակերտներն ինքնուրույն ներկայացրեցին իրենց աշխատանքը ուսուցիչներին:

Առաջին խումբը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները.

Աշակերտները պատմեցին ՀՀ խորհրդանիշների ծագման, նշանակության մասին և երգեցին ՀՀ պետական օրհներգը:

Երկրորդ խմբի աշակերտները ներկայացրեցին ՀՀ մարզերը իրենց մարզկենտրոններով, ներկայացրեցրին յուրաքանչյուր մարզի աշխարհագրական դիրքը և առանձնահատկությունները:Սմարթ գրատախտակի վրա բացեցին յուրաքանչյուր թաքնված մարզը:

Երրորդ խմբի աշակերտները ներկայացրեցին ՀՀ տեսարժան վայրերը: Ավելի պատկերավոր հիշելու համար որոշվել էր, որ յուրաքանչյուր մարզում պետք է ներկայացվի մեկ տեսարժան վայր: Դարձյալ սմարթ գրատախտակի վրա յուրաքանչյուր աշակերտ իր ներկայացրաշ տեսարժան վայրը տեղադրեց իր մարզի վրա: Պատմեցին յուրաքանչյուր վայրի ծագման, դարերի ընթացքում իրենց ավերման պատճառների, վերականգման և մշակութային առանձնահատկությունների մասին:

Չորրորդ խումբ տարբեր հեղինակների կողմից գրված բանաստեղծություններ և երգեր ձոնեց Հայաստանին:

Հինգերորդ խումբը ներկայացրեց հայ անվանի մարդկանցից մի քանիսը (գրող, նկարիչ, ակադեմիկոս, երգահան, դերասան, շախմատիստ, ֆուտբոլիստ) կենսագրությունը, գործունեությունը, կոչումները և այլն:

Դասն ամփոփվեց Հայաստանի մասին ասույթներով, և յուրաքանչյուր աշակերտ նշեց՝ ինչ է հայրենիքն իր համար:

Նախագծային ուսուցումն ավելի արդյունավետ է Սովորողի կարողությունների զարգացում և հմտությունների ձևավորում հիմնախնդրի լուծման գերակայության դեպքում:

1. Սովորողների մեծ մասը հակված է իրականացնել միջնաժամկետ նախագծեր:
2. Նախագծային ուսուցումն արագացնում է օտար լեզուների յուրացումը:
3. Նախագծային ուսուցումը ներդաշնակեցնում է անհատի զարգացման մրցակցային և համագործակցային հարցազրույցները:
4. Երկարաժամկետ նախագծի իրականացումը գիտական մտածողության ձևավորման անկյունաքարն է:
5. Նախագծային գործունեության ընթացքում սովորողի գնահատումը գերադասելի է երկբալանոց՝ կարող է շարունակել մասնակցությունը նախագծին կամ չի կարող, իսկ նախագծի ամփոփման ժամանակ սովորողի ձեռք բերած արդյունքների գնահատումը հարկ է, որ հենվի ինքնագնահատականի, ինչպես նաև հրապարակային պաշտպանության արձագանքների վրա:
6. Նախագծային ուսուցման մեթոդի բացարձականացումը վտանգում է սովորողի անհատականության զարգացման համակողմանիությունը և աղքատացնում է մանկավարժական գիտելիքների արհեստանոցը:
7. Անհրաժեշտ է, միշտ ուշադրության կենտրոնում պահել նախագծային ուսուցման միջառարկայական բնույթը:
8. Իրականացված նախագծի արդյունքների հրապարակային շտպանությունը բարձրացնում է սովորողի ինքնագնահատականը և նպաստում է նրա սոցիալականացմանը:

Ինչպես ասել է Անանուն Իմաստունը.

«Ապագադ լոկ մտապատրանք է, եթե արահետդ վարձակալել եմ»:

Նախագիծն ամփոփող դասը փաստեց, որ թիմերը հրաշալի համագործակցել էին, կարողացել էին հասնել դրված նպատակին,ինքնուրույն հետազոտական աշխատանք էին կատարել, իսկ նախագծային ուսուցման մեթոդով՝ աշակերտի ներգրավմամբ ձեռք բերված գիտելիքներն առավել մնայուն և երկարատև են լինում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախագծային գործունեության միջոցով իրականացրած հետազոտական աշխատանքի արդյունքում նկատելիորեն զարգանում են կրտսեր դպրոցականի՝
   - Ընդհանուր ուսումնական կարողություններ՝ տեղեկությունների հայթհայթում համակարգչից օգտվելու կարողություն, հանրագիտարանից օգտվելու կարողություն:
   - Համագործակցային կարողությունները և հմտությունները՝ խբային աշխատանք կատարելու կարողության, դասընկերների կարծիքը լսելու ունակություն
   - Ստեղծագործական կարողությունները և հմտությունները՝ միջառարկայական կապերի միջոցով նախագծային ունակությունների զարգացում:
2. Նախագծային մեթոդով աշխատելիս մասնավորապես նրա արդյունքը գնահատելիս պիտի կարևորվի յուրաքանչյուր սովորողի գործուն մասնակցությունը՝ հաշվի առնելով նրա անձնական հետաքրքրությունները ուսումնասիրվող թեմայից:
3. Նախագծային գործընթացն արդյունավետ է դառնում, երբ սովորողներին հանձնարարվում են յուրացրած գիտելիքների և կարողությունների շուրջ թեմաներ, ինչպես նաև իրական կյանքից վերցված այնպիսի խնդիրներ, որոնք ծանոթ են սովորողներին և կարևոր են նրանց համար:
4. Նախագծային գորունեության գործընթացում ամենաէականը աշխատանքի ընթացքի նախնական պլանավորումն է, ըստ դրանց կատարման փուկերի:Եվ աշխատանքի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այդ փուկերից յուրաքանչյուրի ճիշտ պլանավորմամբ և ընթացքի կազմակերպմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլիմիրյան Ջ. Խմբային աշխատանքը որպես ստեղծագործական – հետազոտական ուղղվածության ապահովման միջոց, իրականացման մեթոդիկան: <<Նախաշավիղ>> 2001թիվ 3, էջ 27-32
2. Գյուլամիրյան Ջ., մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա,Երևան Զանգակ 2015թ:
3. Գյուլամիրյան Ջ <<Նախագծային գործունեությունը որպես դասվարների մանկավարժական հաղորդակցման կարողության զարգացման միջոց, Բրյուսովի անվան համալսարանի գիտական ժողովածու,2012թ
4. Հանրակրթության պետական չափորոշիչ, Անտարես, Երևան 2012թ
5. Չիբուխչյան Կ. <<Կրտսեր դպրոցականների հետազոտական կարողությունների ձևավորման մեթոդները>>, <<Նախաշավիղ>> էջ 3, 2012, թիվ 3
6. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Ես և շրջակա աշխարհը,<<Աստղիկ Գրատուն>>,Երևան 2022թ